

46 Յետ ամսոց ինչ Յակոբ Նալեան
 Զիւր դասակից բաբունս համայն
 Յըրուեալ կարգէր ըստ իւր բոսման
 Դէտ է՝ առաջնորդ յաթոռս պատկան :

47 Զորոց ցրեալ խումբ ամենայն
 Զանայր բանիւ յորդորական
 Հաճել զՍարգիս իսկ Սառաֆեան
 Ընտրել սակս իւր գահ ինչ արժան :

48 Զայս առնէր նա ըստ ոմանց,
 Զի կասկածէր գուցէ ոք յայնց
 Միաբանեալ ընդ իշխանաց
 Առցէ յիւրմէ զիւր գահ փառաց :

49 Իսկ Սարգիս մեր խորշիւր ի բաց
 Յընդունելոյ զժիճակ հովուաց
 Դէտ լինելով եկեղեցեաց,
 Զի փորձեալն էր զերկուսն իսկ յայնց :

50 Ապայ դիտեալ զմիտս Յակոբայ
 Որ ոչ հաճէր ընդ կայն նորայ
 Ի քաղաքին Բիւզանդիայ,
 Լինէր ն՞ու իրակ Սուրբ Յակոբայ :

51 Զայս նոր պաշտօն նուիրակի
 Պարտն էր եղբւլ ի յիճակի
 Ըզմիւռնացւոց մեծ աշխարհի
 Թղթով Գօրիգոր Պատրիարգի :

52 Զուեալ ապա Սարգիս անտի
 Ռահ գործելով ողջամբ կարի
 Յըզմիւռնիա շէն հասանի
 Ուր ի Հայոց պատուեալ յարգի :